



Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 152
< 01 > 08 2014թ.

ք. Արտաշատ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշման պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. 2014 թվականի օգոստոսի 28-ից 29-ը Արարատի մարզում կազմակերպել և անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Ազատի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում ԲՊ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով.

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատվել՝

- 1) Ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.
- 2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,
- 3) ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Ուսումնավարժությունում ներգրավվել՝

- 1) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ԱԻ հանձնաժողովը
- 2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ՄՓՎ անձնակազմը
- 3)Տարահանման մարզային հանձնաժողովը

- 4) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինները,
- 5) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը,
- 6) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը,
- 7) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը,
- 8) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արարատի մարզային վարչությունը,
- 9) ՀՀ ԱԻՆ Արարատի մարզի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայությունը
- 10) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության Արարատի մարզային կենտրոնը,
- 11) « Հայ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ «Կենտրոն-Արևմտյան» տարածքային մասնաճյուղի «Արտաշատ» տեղամասը
- 12) «ԱրմենՏել» ՓԲԸ «Արարատ» մասնանաճուղը
- 13) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ, Արևշատ, Գետազատ համայնքները
- 14) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արարատի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը,
- 15) «Մասիսի ՃՇՇ» փակ բաժնետիրական ընկերությունը:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, ՄՓՎ պետ փ/ծ գնդապետ Մ. Մարգարյանին

- 1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ օգոստոսի 20 -ը ներկայացնել հաստատման:
- 2) կազմակերպել ուսումնավարժությունը ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի:
- 3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում.
- 4) Ուսումնավարժության անցկացման պատրաստ լինելու մասին զեկուցել 2014թ օգոստոսի 25-ին

5. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

- 1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ ճշգրտել «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի եվ փլուզման դեպքում Արարատի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ով նախատեսված միջոցառումները.
- 2) համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.
- 3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.
- 4) գործնական միջոցառումների իրականացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները

7. Սույն հրամանը հայտարարել ըստ առնչության

ՄԱՐԶՊԵՏ



Ռ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ